

արատակոց վերայէն եւ այս կերպիւ պատժել կուզէ, սակայն յայտնի է որ սուտեց յանցանքն յայտնելու պատիժը ներդարձու թիւն չընէր. ս'չ, ե ինչ է Հայուն յանցանքը. — Իւր խանարհու թիւնը, իւր հնազանդութիւնը և իւր օրինատարհութիւնը, որուն վարձքն է եղեր այս ամենտէրթին անարդութիւր որ առանց զէնքի ժամաբարսի մի գէմ Ս. Մինդեան աչրին բերանը գնեուար ներ շրջապատեն և սուրենբըր ժամաբար Տեսուչ վարդապետին գարձենն, սակալ թէ “Եթէ կարող ես վեր ել” : Զգացմունք բեր որ համբերէ . որ վայրագ սիրտ, ս'ր վայրենի մարդ իւր ամենանուրբ զգացման այսքան վիրաւորիլը կը տեսնէ և անզգայ կը մնայ : Արձանախան ակնածութիւնը մէկ կողմէն ազգային իրաւանց բռնաբարուելէն յառաջ եկած արդար ցասածը միւս կողմէն կարծես կը բռնադատէն զմարդ ամեն միջոց արդար համարիլ և միայն գործել . այլ առաքինութեան սղին պարկեշտութեան, երկիրգածութեան եւ բարեսիրութեան գրացու մը ասնձ կը դնէ առ վայր մի այս ամենաւն և կը սպասէ վախճանին . . . :

ՈՐՈՒՆ ՀԱՒԱՍԱՆՔ

Երբեմն սուտերու բարձրութեան մէջէն ճշմարտութիւնը որոշել անկարելի կը լինի. մասնաւանդ երբ երկու կողմէն ալ հաւասար փաստեր կան :

Ճշմարտութիւնը այսպէս շատ անգամ շահատէրներու, մոլորներու և կամակորներու ձեռքով փաթցմաներու ներքեւ կամ գրուաններու տակ կը

ճածկուի, և փոխանակ լոյս ակնբուխաւ որ ու մտաւախուղ կը տարածէ. որով հայող աչքերը ոչինչ չեն կարող տեսնել ևւ ընել, բայց միայն որակեր խորհաստիւր, որով շատ անգամ յանդէս կ'անկանին նաև խորհորատներու մէջ :

Այս միջոցներուս Աղգին մէջ խիտ մեծ խնդիրներ կը յուզուին, Պոլսոյ Ս. Պատրիարք Հայրիկի հրաժարակար նը, նորա յետս կոչու մը, Գաղարական ժողովոյ լուծու իլը, դո՛նափակ ընդհուտուր ժողով. Արքայական տեսակ և այլն : Այս ամեն խնդիրները այնչափ փոփոխեցան, այնքան գոյն ու կերպարանք առին, որ մարդ կը շուարի : Լրագիրք, որոց պարտքն է իրը իւր էութեամբն ու որպիսութեամբը ներկայացնել, հազար կերպարանք կուտան . իրարու բասածը կը ստեն . մի և նոյն ժողովի մէջ խօսուածները մին կերպ մի խոսի միւր այլ կերպ կը պատահէ . թող սր եղելութիւնը այսպէս խեղաթիւրուած են, այլ և որ առաւել վատութիւնն է, որ քսամնելի անարդութիւն է լրագրբանկան պաշտօնէութեան, եթէ հաւատալ արժան է, ինքնին սուտերու խաբէբայութիւններ եւս կը հնարեն ու առանց ամաչելու կը հրատարակեն . ճշմարտը խօսելով այնչափ սուտերու խաբէբայութիւն լսեցինք, այնչափ անգամ լրագրաց մէկուն իրբեւ նշմարիտ աղբիւրէ սուած ու հրատարակածը միւսին տուելը տեսանք որ կարծես նոյնս այլ ևս հաւատ ընծայելն քիչ քիչ անկարելի կը լինի . հրատարակախօսութեան այս վիճակը խիտո ցաւալի է և անպատուութիւն է ոչ միայն խրմբագրաց, այլ և նոյն խոս ազգին, որ իւր բերանն համարուած թերթերը կիրք յագեցնելու համար խաբէութիւններ կ'ընեն և ամենքն ալ յանուն արդարութեան, իրաւանց, ճշմարտութեան

և ազգային շահու կը խօսին, իսկ հե-
ռաւոր ազգայինը շուարած ու շփո-
թած թերթը ձեռքէն վտար կը ձգէ և
զարմանօք կ'ըսէ ասանց ՈՐՈՒՆՆ ԶՍ.
ԻՍՏԱՆԻՔ :

Ս. Ռ. Ո. Ղ. Զ. Ա. Կ. Ա. Ն.

(Հարուստի թիւն, տ. Ե. Թիւ. Ը.)

Բ.

Իմ ազնիւ բարեկամներս, սիրուն
զուկներս, ո՛վ իմ քաղցրիկ եղբայրնե-
րըս. սիրաս ո՞րչափ կը մօրմօքի ձեր ու
զորմօքի վիճակին վերայ. չք գիտեմ ինչ
խանդաղատական անուն տամ ձեզ :
Սրտիս ցաւը և ձեր թշուառութեան
վերայ զգացած կարեկցութիւնս այն-
չափ զօրացած են, որ կարծես ինչ ալ
խօսիմ՝ չք պիտի յագենամ. ինչ անուն
ալ տամ՝ հերիք չք պիտի սեպեմ. ձեր
փրկութեան մեծ պարտքը և ծանր հո-
գը և ձեր բարօրութեան համար ու-
նեցած սաստիկ րազմանքս կ'ըստիպեն
զես տակաւին խօսիլ : Զձեզ խաբու
պատրուակը վերցնելով և զձեզ բուն
իսկ ձեր կերպարանօքը ցոյց տալով՝ ըզ-
ձեզ համոզելու համար հարկ է խօսիլ
գեռ եւս :

Նախորդ խօսքերս հասկացողի հա-
մար ամեն բան կը պարունակէին, բայց
որովհետեւ այնպէս կը կարծեմ որ զա-
նոնք գլխաւորապէս քիչ հասկացողներ
ալ պիտի կարգան, ուստի աւելի պար-
զել անհրաժէշտ պարտք կը համարիմ.
մանաւանդ գիտեմ, որ ձեր ինքնասի-
րութիւնը և յանձնարաստանութիւնը
իմ ասածներուս տակաւին չք համոզ-

ուեցաւ լիովին թէ՛ արդարեւ սյդ չափ
աղէտներ կարող են յառաջ գալ զգա-
յ սկիան բերկրութեան, կրամ հեշտախ-
տութեան, ուստի պիտի յիշեմ որ
բիշ օրինակներով և օրէնքներով զձեզ
համոզել, որուն եթէ հասանել յաջը
ղիմ, և եթէ դուք ալ խնայեալութեամբ
և հնազանդութեամբ օգնէք այս յաջը,
զութեան, այն ատեն ո՛հ, անկարու-
ղբելի է իմ ուրախութիւնս և միտթա-
րութիւնս : Շնորհեցէք ինձ ո՞րդեակք
իմ, այս միտթարութիւնը. իբրեւ շը-
նորհք, իբրեւ անգին նուէր կը խնդ-
րեմ ձեզմէ, շնորհեցէք ինձ այս իմ
ցանկալի բերկրութիւնս ու երջանկա-
ւէտ միտթարութիւնս :

— Բայց ի՞նչ կ'ըսեմ. միթէ ինձ միայն
շնորհած պիտի լինիք :

— Ո՛չ, այլ նաև բոլոր զձեզ տեսնող
և ձեր ընկերութիւնը վայելող և ձեզի
պէտք ունեցող մարդկան. ձեր անձին՝
ձեր ծնողաց, գերդաստանին, բոլոր բա-
րեկամաց, ամբողջ ազգին և նաև բո-
վանդակ մարդկու թեան շնորհած պի-
տի լինիք, քանզի նորա անդամն էք :
Այն ատեն՝ ձեր այժմեան բուռն ե-
ռանդեամբ որոնած և ձեռք չք ձգած
երջանկութիւնը և խողաղութիւնը ձեր
չուրջը սրատած պիտի տեսնէք. այնու-
հետեւ կեանքը լուր սահմանին և իւր
օրինաց մէջ վայելելով՝ պիտի զգայք
նորա մեծ պիտանութիւնն ու անպա-
տեմ քաղցրութիւնը. այն ատեն հա-
ճայից չափը պիտի ճանչնաք, այն չափը
միայն պիտի վայելէք, որ բնական է,
որ օրինաւոր է և որ օգտակար է. և
այնչափով գոհ պիտի լինիք առանց ա-
ւելորդին, ապօրինին և անբնականին
ցանկանալով միշտ կարօտ, անյազ և
սգեսպառ մնալու. առանց ամենայն
զօրութեամբ երջանկութեան ետեւէն
վտղելու և շարունակ անկէ հեռանա-
լու. այլ զայն ձեր մօտը, բուն իսկ ձեր